



Հանրաբանական հետազոտության վերլուծություն

*Աշխատանքն իրականացվել է «Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոններ-
Հայաստան» (Եվրասիա հիմնադրամ) հետազոտական դրամաշնորհի շրջանակներում՝
Նյու Յորքի Կարնեգի Կորպորացիայի ֆինանսական աջակցությամբ:*

«Աշակերտների իրավագիտակցությունը և իրավական կրթության գնահատումը»

Ներկայացված է՝ ՀՈԿԿ-Հայաստան

Ներկայացված է ծրագրի ղեկավար,
Դիանա Տեր-Ստեփանյանի կողմից

Դրամաշնորհ՝ C05-7104

հեռ՝ 093-81-83-67
էլ. փոստ terstepanyan@yahoo.com

Երևան, Հայաստան, 2006

Բովանդակություն

Ներածություն.....	3
Հարցվածների ընդհանուր բնութագիրը և հետազոտության մեթոդաբանությունը	6
ԲԱԺԻՆ I Աշակերտների իրավական հայացքների հիմնական բնութագրերը	8
1.1 Օրենքը և նրա դերը հասարակության կյանքում	8
1.2 Պատիժ և պատժիչ համակարգ	11
1.3 Մարդու իրավունքները և ազատությունները	21
ԲԱԺԻՆ II Երեխաների իրավունքները տանը և դպրոցում	27
2.1 Երեխաների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը	27
ԲԱԺԻՆ III Իրավական գիտելիքները և իրավունքի դասավանդումը	37
3.1 Իրավունքի դասավանդման անհրաժեշտությունը	37
3.2 Իրավական գիտելիքները և վարքագիծը տարբեր իրավիճակներում	41
Եզրակացություններ	45
Հավելված 1. Հարցաթերթիկը և արդյունքները	
Հավելված 2. Հարցաթերթիկի կառուցվածքը	

Ներածություն

90-ական թվականներին Հայաստանը իրավական, ժողովրդավարական պետություն հռչակելու հետևանքով պետության իրավական համակարգը զգալի փոփոխություններ կրեց: Իրավական բարեփոխումների շրջանակներում, որը հիմնված էր օրենքի և իրավունքի գերակայության սկզբունքի վրա, ընթացան օրենսդրական բարեփոխումներ, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հռչակվեցին սահմանադրորեն անրագրված արժեք: Այս ամենի հետևանքով հասարակությունում մեծացավ իրավունքի և իրավական ինստիտուտների նկատմամբ պրակտիկ հետաքրքրությունը:

Մյուս կողմից, ներկայից սոցիոմշակութային իրավիճակը այնպիսին է, որ այդ գործընթացները հիմնված չեն իրավական ավանդույթների վրա, մարդկանց գիտակցության մեջ իրավունքը և օրենքը չի դիտվում որպես արժեք: Օրենսդրության նորացմանը զուգընթաց առավել ակնհայտ է դառնում խոր հակասությունը, որ առկա է նոր իրավական համակարգի և բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակի միջև:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը այս խնդրի լուծման հարցում առաջնային դերը պատկանում է կրթությանը: Ներկայիս իրողություններում անհատի կրթման առանցքային գերակայություն է դառնում սեփական իրավունքները պաշտպանելու անհատի կարողությունը, հիմնարար իրավական նորմերի իմացությունը և պետության իրավական համակարգի հնարավորությունների օգտագործումը:

Այն, ինչ ժողովրդավարության և իրավական պետության երկար ավանդույթներ ունեցող երկրներում դաստիարակվում է ինքնին կյանքի փորձով, ծնվում է ընտանիքում, ձևավորվում է կարծես կյանքի բնական ընթացքից, մեր պայմաններում պետք է դառնա նպատակաուղղված կերտման առարկա: Սա պահանջում է լուրջ և համակարգային աշխատանք՝ ուղղված աշակերտների իրավական կրթությանը և դաստիարակությանը:

Որոշակի քայլեր այս ուղղությամբ կատարվել են պետության կողմից: Ներկայումս Հայաստանի հանրակրթական դպրոցներում պետական առարկայացանկում որպես պարտադիր ուսումնական առարկաներ դասավանդվում են «Մարդու իրավունքներ»,

«Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաները 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում համապատասխանաբար:

Սակայն 2001 թվականից ի վեր, երբ առարկաները ներառվեցին պարտադիր առարկայաչառում, չի անցկացվել բազմակողմանի գնահատում: Մինչդեռ բովանդակապես նոր առարկայաչառ մշակելու համար հարկավոր է բազմակողմանի ուսումնասիրություն՝ ի՞նչ է արդեն հայտնի աշակերտներին տվյալ առարկայի վերաբերյալ, ինչպե՞ս են նրանք վերաբերում առարկայի հնարավոր բովանդակությանը, ինչպե՞ս նաև ինքնին առարկայաչառի դասավանդմանը: Քանի որ իրավունքի դասավանդումը ներառում է ուսուցում այնպիսի երևույթների մասին, որոնք կապված են կենսափորձի հետ, նույնիսկ կոնկրետ գիտելիքների բացակայության դեպքում սովորողների մոտ արդեն իսկ կան որոշակի ձևավորված պատկերացումներ: Եվ այդ պատկերացումները ազդում են առարկայի նկատմամբ վերաբերմունքի, այն ընկալելու հնարավորությունների, և, հետևաբար դասավանդման արդյունավետության վրա:

Այս խնդիրները ուսումնասիրելու նպատակով 2005 թվականին Հայաստանի հանրակրթական դպրոցների 10-րդ դասարանի աշակերտների շրջանում անց է կացվել հանրաքանական ուսումնասիրություն՝ ուղղված սովորողների իրավագիտակցության, իրավունքի նկատմամբ նրանց վերաբերմունքի և այլ խնդիրների ուսումնասիրությանը: Այս նպատակով մշակվել է հարցաթերթիկ, որը ներառում է տվյալ խնդրի տարբեր ասպեկտներ:


Իրավագիտակցություն ասելով հասկանում ենք սովորողների պատկերացումների, դիրքորոշումների և նրանց գիտելիքների ամբողջությունը տվյալ ոլորտում: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է աշակերտների վերաբերմունքը իրավունքի գոյության կարևորության, օրենքներին հետևելու անհրաժեշտության և պատժամիջոցների, մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտության, հասարակության և պետության կառուցվածքին առնչվող հարցերին: Ուսումնասիրության առարկա են հանդիսացել նաև սովորողների իրազեկությունը օրենքների վերաբերյալ, մեր հասարակությունում մարդու իրավունքների ոտնահարմանը և մարդկանց իրավական վարքի դրդապատճառներին վերաբերող հարցերը:

Հավելվածում ներկայացված է հարցաթերթիկի ամբողջական տեքստը և յուրաքանչյուր պատասխանը ընտրած հարցվածների թիվը, ինչպես նաև հարցաթերթիկի կառուցվածքը, որտեղ նշված է, թե որ հարցը իրավագիտակցության որ ասպեկտին է վերաբերվում:

Հարցվածների ընդհանուր բնութագիրը և հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտության շրջանակներում ընդհանուր առմամբ հարցվել է հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի 494 աշակերտ Հայաստանի բոլոր մարզերից (տես *Գծապատկեր #Ա*): Ընտրանքում ընդգրկվել են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքների դպրոցներ: Հարցված աշակերտների 55.5 % քաղաքային դպրոցի սովորողներ են, 44.5%՝ գյուղական: Ընտրանքում ընդգրկվածների 59% իգական, 41%՝ արական սեռի ներկայացուցիչներ են:

Գծապատկեր # Ա Հարցվածների բաշխումն ըստ մարզերի



Տվյալ հետազոտությունում կիրառվել է երկաստիճան պատահական ընտրանք: Ընտրաքի առաջին աստիճանում ընտրանքի միավորներ են հանդիսացել ավագ դպրոց (8-10-րդ դասարաններ) ունեցող հանրակրթական դպրոցները՝ թվով 1472: Ելնելով միջինում 25 աշակերտ յուրաքանչյուր դպրոցից հաշվարկից՝ ընտրանքի երկրորդ աստիճանում ընտրվել է 18 դպրոց: Այդ դպրոցները ընտրվել են ՀՀ Կրթության և գիտության նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի

հանրակրթական դպրոցների տվյալների բազայից՝ պատահական ընտրանքի սկզբունքով: Ընտրանքային համախմբությունում ընդգրկվել են 10 քաղաքային և 8 գյուղական դպրոց Հայաստանի բոլոր մարզերից:

Սույն հետազոտության շրջանակներում ստացված տվյալների սահմանային սխալը պայմանավորված է ընտրանքի ծավալով և 95% հուսալիության աստիճանով կազմում է 4%-5%:

Հետազոտության շրջանակներում հարցվել են նաև տվյալ առարկայաչարը դասավանդող ուսուցիչներ, մի հարցաթերթիկով, որը քիչ է տարբերվում աշակերտների հարցաթերթիկից: Ուսուցիչների և աշակերտների հարցման արդյունքում ստացված

տվյալների համեմատական վերլուծությունը հետաքրքրություն է ներկայացնում տվյալ հետազոտության շրջանակներում, քանզի ուսուցումը, վերջին հաշվով, իրականացվում է առարկայաչարը դասավանդող ուսուցիչների կողմից և նրանից, թե ինչ հայացքներ ունեն ուսուցիչների, մեծապես կախված է այն, թե ինչ գիտելիքներ կստանան աշակերտները և ինչ արժեքներ կսերմանվեն սովորողների մեջ ուսուցման ընթացքում:


ԲԱԺԻՆ I

Աշակերտների իրավական հայացքների հիմնական բնութագրերը

1.1. Օրենքը և նրա դերը հասարակությունում

Օրենքի նկատմամբ աշակերտների վերաբերմունքը և իրավական վարքագծի դրդապատճառները պարզելու նպատակով նրանց առաջադրվել է երեք հարց: Հարցերից առաջինը վերաբերում է իրավական վարքի դրդապատճառներին և պրոեկտիվ բնույթ ունի. «Պատահում է, որ մարդկանց դուր չի գալիս այս կամ այն օրենքը, բայց նրանք հետևում են նրան: Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ են նրանք ենթարկվում օրենքներին»:

Գծապատկեր #1.1 «Ինչո՞ւ են մարդիկ ենթարկվում օրենքներին» հարցի պատասխանները



Հարցվածների զգալի մասի համոզմամբ (26.1%), մարդիկ հետևում են օրենքներին պատժվելու վախից դրդված, ինչը կարելի ընդունել որպես հարցվածների սեփական դրդապատճառ: Այն, որ «ընդունված չէ խախտել օրենքը» և «օրենքի նկատմամբ հարգանքն է» պայմանավորում մարդկանց իրավական վարքը, անգամ եթե այս կամ այն օրենքը դուր չի գալիս, նշել են հարցվածների 25.5 և 22.3 տոկոսը համապատասխանաբար:

Օրենքի կարգավորիչ դերը հասարակության կյանքում ընդունում են հարցվածների 16 տոկոսը՝ ընտրելով «կյանքը վտանգավոր կդառնա» պատասխանի տարբերակը:


Այս հարցին ստացված պատասխանների վերլուծությունն ըստ սեռի և բնակավայրի տիպի ևս հետաքրքիր արդյունքներ է տալիս: Ինչպես երևում է աղյուսակ #1.1.-ից, աղջիկների համար առավել ազդեցիկ է մարդկանց և հասարակության կողմից քննադատվելու դրդապատճառը (83,3%), մինչդեռ տղաների համար՝ պատժվելու վտանգը (48,8%): Ի տարբերություն գյուղական համայնքի, քաղաքում ավելի ուժեղ է մարդկանց և հասարակության կողմից քննադատվելու վտանգով պայմանավորված՝ օրենքին հետևելու շարժառիթը (83,3%): Գյուղական դպրոցների հարցվածները առավել հավատացած են, որ մարդիկ հետևում են օրենքներին օրենքի նկատմամբ հարգանքից դրդված (62,7%):

Աղյուսակ #1.1. «Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են մարդիկ ենթարկվում օրենքներին» հարցի պատասխանների բաշխումն ըստ սեռի և բնակավայրի (% տվյալ տարբերակը ընտրածների մեջ)

	արական	իգական	քաղաք	գյուղ	Ընդամենը
Որովհետև ընդունված չէ խախտել օրենքը	41,3	58,7	54,8	45,2	100 %
Որովհետև վախենում են պատժվելուց	48,8	51,2	59,7	40,3	100 %
Որովհետև հարգում են օրենքը	40,9	59,1	37,3	62,7	100 %
Նրանք կարծում են, որ եթե բոլորը խախտեն օրենքները կյանքը վտանգավոր կդառնա	38,0	60,8	54,4	45,6	100 %
Վախենում են մարդկանց և հասարակության կողմից քննադատվելուց	16,7	83,3	83,3	16,7	100 %
Դժվարանում են պատասխանել	35,3	64,7	94,1	5,9	100 %

Օրենքի կարևորության ընդունումը հարցվողների կողմից դեռևս չի նշանակում, որ իրական կյանքում նրանք պատրաստ են անվերապահորեն հետևել օրենքին: Այն հարցին, թե «*Ե՞րբ է պետք հետևել օրենքներին*» հարցվածների միայն 47.8 տոկոսն է տվել «*բոլոր դեպքերում*» պատասխանը: Որպես օրենքներին հետևելու անհրաժեշտ պայման հարցվածների 23.5 տոկոսը կարևորել է «*օրենքի համապատասխանությունը իր և իր շրջապատի պատկերացումներին*»: Աշակերտների 18.4 տոկոսը պատրաստ է հետևել միայն այն օրենքներին, որոնք «*համահունչ են հասարակության ավանդույթներին*», իսկ 7.3% կհետևեն օրենքին այն դեպքում, երբ առկա է պատժվելու վտանգը:

Գծապատկեր #1.2. «Ձեր կարծիքով ե՞րբ է պետք հետևել օրենքներին» հարցի պատասխանները



Հետաքրքրական է, որ հարցին «բոլոր դեպքերում պետք է հետևել օրենքներին» պատասխանի տարբերակը նշածների գրեթե 2/3 աղջիկներ են, մնացած 1/3՝ տղաներ: Մինչդեռ տղաների համար, ինչպես վկայում է նաև նախորդ հարցին ստացված պատասխանները, առավել ազդեցիկ է պատժվելու վտանգով պայմանավորված դրդապատճառը (տե՛ս Աղյուսակ #1.2.):

Աղյուսակ #1.2. «Ձեր կարծիքով ե՞րբ է պետք հետևել օրենքներին» հարցի պատասխանների բաշխումն ըստ սեռի և բնակավայրի (% տվյալ տարբերակը ընտրածների մեջ)

	արական	իգական	քաղաք	գյուղ	Ընդամենը
Երբ օրենքները համահունչ են (չեն հակասում) հասարակության ավանդույթներին	42,9	57,1	50,5	49,5	100%
Երբ օրենքները համապատասխանում են իմ և իմ շրջապատի պատկերացումներին	40,5	59,5	54,3	45,7	100%
Երբ օրենքը խախտելու համար կարող են պատժել	47,2	52,8	63,9	36,1	100%
Բոլոր դեպքերում պետք է հետևել օրենքներին	36,9	62,7	54,7	45,3	100%
Դժվարանում եմ պատասխանել	66,7	33,3	83,3	16,7	100%

Այս շարքի երրորդ հարցը վերաբերում է օրենքի կարգավորիչ դերին՝ որպես մարդկանց միջև փոխհարաբերությունները և վեճերը կարգավորելու մեխանիզմ:

Հարցվածների գրեթե կեսը (46.6%) գտնում է, որ «մարդկանց միջև ծագած վեճերը պետք է լուծվեն ազգային, ընտանեկան ավանդույթների, բարոյական և մարդկային արժեքների հիման վրա»: Այս տարբերակը ընտրածների 2/3 աղջիկներ են (67%): Աշակերտների միայն 39.7 % է համաձայն այն մտքի հետ, որ «մարդկանց միջև ծագած

վեճերը պետք է լուծվեն միայն օրենքով, դատարանի միջոցով», ընդ որում գյուղական դպրոցների հարցվածները փոքր ինչ ավելի հակված են այս տարբերակին, քան քաղաքային դպրոցներում սովորող աշակերտները: Հարցվածների 33 տոկոսը գտնում է, որ «մարդիկ իրենց խնդիրները լուծելիս չպետք է դիմեն պետության միջամտությանը (օրենքներ, դատարաններ, իրավապահ մարմիններ և այլն), այլ պետք է միմյանց մեջ լուծեն խնդիրները՝ առաջնորդվելով հասարակական ավանդույթներով»: Խնդիրների լուծման այս տարբերակին ավելի շատ հակված են իգական սեռի ներկայացուցիչները (55,2%) և քաղաքային դպրոցի սովորողները (56,4%): Ջգալի մաս են կազմում (22.7 %) նաև այն աշակերտները, որոնք գտնում են, որ «մարդկանց միջև ծագած վեճերը պետք է հարթվեն հասարակությունում և/կամ համայնքում հեղինակություն և հարգանք վայելող մարդկանց միջնորդությամբ»: Այս տարբերակը համեմատաբար ավելի ընդունելի է տղաների կողմից (48,2%): Հարցվածների 7.7 տոկոսը դժվարացել է պատասխանել հարցին:

Աղյուսակ #1.3. Մարդկանց միջև ծագած վեճերի լուծման մեխանիզմների վերաբերյալ հարցի պատասխանների բաշխումն ըստ սեռի և բնակավայրի (% տվյալ տարբերակը ընտրածների մեջ)

	արական	իգական	քաղաք	գյուղ	Ընդամենը
Մարդիկ իրենց խնդիրները լուծելիս չպետք է դիմեն պետության միջամտությանը, այլ պետք է միմյանց մեջ լուծեն խնդիրները՝ առաջնորդվելով հասարակական ավանդույթներով	44,8	55,2	56,4	43,6	100%
Մարդկանց միջև ծագած վեճերը պետք է լուծվեն միայն օրենքով, դատարանի միջոցով	43,4	56,6	49,0	51,0	100%
Մարդկանց միջև ծագած վեճերը պետք է հարթվեն հասարակությունում և/կամ համայնքում հեղինակություն և հարգանք վայելող մարդկանց միջնորդությամբ	48,2	51,8	54,5	45,5	100%
Մարդկանց միջև ծագած վեճերը պետք է լուծվեն ազգային, ընտանեկան ավանդույթների, բարոյական և մարդկային արժեքների հիման վրա	32,6	67,0	56,1	43,9	100%
Դժվարանում են պատասխանել	44,7	55,3	71,1	28,9	100%

Հարկ է նշել, որ հարցվողներն այս դեպքում կարող էին ընտրել երկու պատասխան՝ համաձայնվելով երկու դատողությունների հետ միաժամանակ: Ինչպես ցույց տվեց վերլուծությունը, օրենքը և դատարանը որպես վեճերի և տարաձայնությունների լուծման մեխանիզմ դիտարկողների 40.8 տոկոսը որպես այլ մեխանիզմ ընդունում է նաև «ազգային, ընտանեկան, բարոյական և մարդկային արժեքները», նույն խմբի 12.8 տոկոսը միևնույն ժամանակ ընդունում է հեղինակություն և հարգանք վայելող մարդկանց միջամտությամբ վեճերի հարթման եղանակը: Հարցվածների միայն 33.1 տոկոսն է, որ օրինական ձանապարհից բացի այլ մեխանիզմ չի տեսնում:

Այսպիսով, հետազոտության արդյունքների հիման վա կարելի է փաստել օրենքի՝ որպես հասարակական հարաբերությունները կարգավորող մեխանիզմի վերաբերյալ աշակերտների հակասական պատկերացումների մասին: Մի կողմից ընդունելով օրենքի կարգավորիչ գործառույթը հասարակական հարաբերություններում, մյուս կողմից՝ վերապահելով այն ազգային և սեփական պատկերացումներով և արժեքներով:

1.1.2. Պատիժ և պատժիչ համակարգ

Դեռահասների իրավագիտակցության ուսումնասիրության հարցում կարևոր մաս է հանդիսանում տարբեր տիպի հանցանքների ու զանցանքների և դրանց նկատմամբ սահմանվող պատժների նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքը: Այդ նպատակով ընտրվել և հարցաշարում ներառվել են վեց տարբեր բնույթի հանցանքներ և զանցանքներ՝ ուղղված ինչպես պետության, այնպես էլ մարդու դեմ: Պատասխանելով հարցերին, որտեղ առաջարկվում է պատիժ սահմանել այս կամ այն հանցատեսակի համար, աշակերտները որոշ հանցանքների համար միջինում ավելի խիստ պատիժներ են նշանակում, քան նախատեսված է օրենսգրքով:

Այս հարցախմբից առաջինը վերաբերում է անհատի դեմ ուղղված նյութական կողոպուտին. *«Ձեր կարծիքով ի՞նչ պատիժ պետք է կիրառվի ուրիշի սեփականությունը գողանալու համար»*: Ստացված պատասխանները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ #1.4. *«Ձեր կարծիքով ի՞նչ պատիժ պետք է կիրառվի ուրիշի սեփականությունը գողանալու համար»* հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
վնասի հատուցում ավելացված չափով	183	37,0
կարճաժամկետ կալանք	156	31,6
ուղղիչ աշխատանքներ	59	11,9
երկարաժամկետ կալանք	47	9,5
ֆիզիկական պատիժ (ծեռքի հատում, ծեծ և այլն)	24	4,9
հրապարակային պախարակում, պարսավանք	8	1,6
դ/պ	6	1,2
ցմահ ազատազրկում	5	1,0
մահապատիժ	5	1,0
այլ	1	0,2
Ընդամենը	494	100,0

Մյուս, տնտեսական բնույթի հանցանքը ուղղված է ոչ թե անհատի, այլ պետության դեմ. *«Ձեր կարծիքով ի՞նչ պատիժ պետք է կիրառվի կեղծ դրամանիշներ պատրաստելու համար»*:

Սոյուսակ #1.5. «Ի՞նչ պատիժ պետք է կիրառվի կեղծ դրամանիշներ պատրաստելու համար» հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
կարճաժամկետ կալանք	160	32,4
երկարաժամկետ ազատազրկում	153	31,0
գույքի բռնագրավում	60	12,1
ուղղիչ աշխատանքներ	48	9,7
ֆիզիկական պատիժ (ծեռքի հատում, ծեծ և այլն)	24	4,9
ցմահ ազատազրկում	18	3,6
դ/պ	13	2,6
հրապարակային պախարակում, պարսավանք	12	2,4
մահապատիժ	3	0,6
այլ	3	0,6
Ընդամենը	494	100%

Ինչպես երևում է այս երկու հանցանքների համար հարցվածների կողմից սահմանած պատիժներից, անձնական գույքի կողոպուտը ավելի մեղմ հանցանք է դիտվում և սահմանված պատասխանատվությունը ավելի շատ նյութական փոխհատուցման, քան պատժի բնույթ է կրում: Պետական գույքի նկատմամբ հանցանքը դիտվում է որպես ավելի ծանր հանցանք, ինչը կարելի է դիտարկել որպես ավանդական սովետական մտածելակերպի դրսևորում, որի համար հարցվածների 2/3 որպես պատժամիջոց ազատազրկում են նախատեսում, և միայն 12 տոկոսը՝ նյութական փոխհատուցում, ի տարբերություն ուրիշի գույքը գողանալու համար, որտեղ 37 տոկոսն է կողմնակից նյութական փոխհատուցման:

Հարկ է նշել, որ երկու դեպքում էլ, համեմատած մյուս հանցատեսակների, շատ են պատժի այնպիսի արխաիկ դրսևորումների կողմնակիցները (5%), ինչպիսին է ֆիզիկական պատիժը՝ ծեծ, ծեռքի հատում և այլն:

Իրավական սոցիալականացման վաղ փուլից սկսած ոստիկանը երեխաների, այնուհետև դեռահասների մոտ ընկալվում է որպես պետական այր՝ իշխանության ներկայացուցիչ: Որպես պետության հանդեպ վերաբերմունքի դրսևորման արտացոլում աշակերտներին առաջարկվել է պատասխանել հետևյալ հարցին. «Ձեր կարծիքով ի՞նչ պատիժ պետք է կիրառվի ոստիկանին հարվածելու և/կամ մարմնական վնաս հասցնելու համար»:

Աղյուսակ # 1.6. «Ի՞նչ պատիժ պետք է կիրառվի ոստիկանին հարվածելու և/կամ մարմնական վնաս հասցնելու համար» հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
տուգանք	189	38,3
կարճաժամկետ կալանք	132	26,7
երկարաժամկետ ազատազրկում	53	10,7
այլ (ոչ մի պատիժ)	31	6,3
ուղղիչ աշխատանքներ	23	4,7
ֆիզիկական պատիժ (ծեռքի հատում, ծեծ և այլն)	20	4,0
դ/ւ	20	4,0
ցմահ ազատազրկում	19	3,8
մահապատիժ	4	0,8
հրապարակային պախարակում, պարսավանք	3	0,6
Ընդամենը	494	100%

Այս, ինչպես և այս շարքին պատկանող մյուս հարցերը, իրենց ձևաչափով կիսափակ հարցեր են, այսինքն ենթադրում են հարցվողի կողմից լրացվող «այլ» տարբերակը: Վերը նշված հարցի դեպքում հետաքրքրականն այն է, որ, ի տարբերություն այլ հարցերի, զգալի տոկոս են կազմել (6.3%) «այլ» տարբերակը նշողները: Այդ բոլոր պատասխանները հանգում էին *«ոչ մի պատիժ պետք չէ կիրառել»* տարբերակին, ընդ որում, նման պատասխան տվողների 80,6 տոկոսը տղաներ են: Աշակերտները, ինչպես վկայում են ստացված պատասխանները, ավելի հակված են արդարացնել պաշտոնյաի դեմ գործած արարքը՝ մեղքը ոստիկանի մեջ տեսնելով, ինչպես օրինակ՝ *«ոստիկանը տվյալ մարդուն հասցրել է այն աստիճանի, որ մարդը հարվածել է նրան»*, *«եթե մեղավոր է ոստիկանը, ապա թող /պատիժ/ չկիրառեն»*: Կան նաև նման արարքը ողջունող պատասխաններ. *«ոստիկաններին հասնում ա»*, *«պարզևատրել այդ մարդուն»* և այլն:

Որպես անհատի դեմ ուղղված ծանրագույն հանցանք հարցաթերթիկում ներառվել է հետևյալ հարցը. *«Ձեր կարծիքով ի՞նչ պատիժ պետք է կիրառվի կանխամտածված սպանության համար»*:

Սղյուսակ # 1.7. «Ի՞նչ պատիժ պետք է կիրառվի կանխամտածված սպանության համար» հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
ցմահ ազատազրկում	212	42,9
երկարաժամկետ ազատազրկում	159	32,2
մահապատիժ	72	14,6
կարճաժամկետ կալանք	14	2,8
տուգանք	8	1,6
ուղղիչ աշխատանքներ	7	1,4
հրապարակային պախարակում, պարսավանք	7	1,4
դ/ւ	7	1,4
ֆիզիկական պատիժ (ծեռքի հատում, ծեծ և այլն)	6	1,2
այլ	2	0,4
Ընդամենը	494	100%

Այս հանցանքի դեպքում հարցվողների կողմից հիմնականում սահմանվել են պատժամիջոցներից երեքը: Ամենաբարձր տոկոս կազմում է ցմահ ազատազրկում պատժատեսակը (42,9 %): Այս տարբերակը ընտրածների 2/3 (68,9%) աղջիկներ են: Կանխամտածված սպանության համար երկարաժամկետ ազատազրկում են սահմանել հարցվածների 1/3, որից 52,2 տոկոսը տղաներ են: Մահապատիժ են սահմանել հարցվածների 14,6 տոկոսը (61,1%` աղջիկ, 38,9%` տղա): Ինչպես վկայում են հարցման արդյունքները, աղջիկների կողմից այս հանցանքն ավելի խիստ է դատապատվում:

Հարցերի հաջորդ զույգը վերաբերում է այսօր Հայաստանում լայնորեն քննարկվող կոռուպցիայի խնդրին: Հետազոտության խնդիրների տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում պարզել աշակերտների վերաբերմունքը այս երևույթի նկատմամբ: Առաջին հարցը վերաբերում է կաշառք ստանալուն. *«Ձեր կարծիքով ի՞նչ պատժի պետք է ենթարկել պաշտոնատար անձին կաշառք վերցնելու համար»:*

Սղյուսակ # 1.8. «Ի՞նչ պատժի պետք է ենթարկել պաշտոնատար անձին կաշառք վերցնելու համար» հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
կաշառքի չափը բազմակի անգամ գերազանցող տուգանք	242	49,0
հրապարակային պախարակում, պարսավանք	66	13,4
կարճաժամկետ կալանք	60	12,1
երկարաժամկետ ազատազրկում	42	8,5
այլ (պաշտոնից հեռում)	22	4,5
ուղղիչ աշխատանքներ	20	4,0
դ/պ	16	3,2
ցմահ ազատազրկում	10	2,0
ֆիզիկական պատիժ (ծեռքի հատում, ծեծ և այլն)	9	1,8
մահապատիժ	7	1,4
Ընդամենը	494	100%

Հարցվածների գրեթե կեսը (49 %) կողմնակից է նյութական պատժի՝ տուգանքի, որն օրենսդրությամբ սահմանված է կաշառք ստանալու մեղմ ձևերին՝ պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակներում կաշառք տվողի օգտին որևէ գործողություն կատարելու համար: Մինչդեռ հարկ է նշել, որ օրենսդրությամբ կաշառքի որոշ դեպքերում նախատեսված է երկարատև ազատազրկում (մինչև 12 տարի): Այս հանցանքի դեպքում աշակերտները հակված են ավելի մեղմ պատիժ սահմանել, քան նախատեսված է ազգային օրենսդրությամբ: Հետաքրքրական է, որ նշված հարցերից սա միակն է, որի դեպքում զգալի մաս են կազմում «*հրապարակային պախարակում, պարսավանք*» տարբերակը ընտրածները (13,4%), ինչը վկայում է այն մասին, որ աշակերտները այս հանցանքը դիտարկում են ոչ թե որպես քրեական հանցագործություն, այլ որպես բարոյական նորմերի խախտում: Հարցվածների 4.5 տոկոսը, որպես «այլ» պատասխան, նշել է «*գրկել պաշտոնից*», որը առաջարկված չէր որպես տարբերակ:

Կաշառքի նկատմամբ դեռահասների վերաբերմունքը ամբողջացնելու նպատակով հարցաթերթիկում ներառվել է նաև հետևյալ հարցը. «*Ձեր կարծիքով ի՞նչ պատժի պետք է ենթարկել կաշառք տալու համար*»:

Սղյուսակ # 1.9. «Ի՞նչ պատժի պետք է ենթարկել կաշառք տալու համար» հարցի պատասխանները


	քանակը	տոկոսը
կաշառքի չափը բազմակի անգամ գերազանցող տուգանք	178	36,0
կարճաժամկետ կալանք	115	23,3
ուղղիչ աշխատանքներ	58	11,7
դ/ս	39	7,9
այլ (ոչ մի պատիժ)	36	7,3
հրապարակային պախարակում, պարսավանք	26	5,3
ֆիզիկական պատիժ (ծեռքի հատում, ծեծ և այլն)	17	3,4
երկարաժամկետ ազատազրկում	14	2,8
ցմահ ազատազրկում	8	1,6
մահապատիժ	3	0,6
Ընդամենը	494	100%

Հարկ է նշել, որ օրենսդրությունը հարաբերականորեն ավելի մեղմ պատիժ է սահմանում կաշառք տվողի, քան կաշառք վերցնողի նկատմամբ, ինչը և արտացոլված է հարցվածների պատասխաններում: Դրա հետ մեկ տեղ, զգալի մաս են կազմում կաշառք տալու երևույթը այս կամ այն կերպ արդարացողները և այն որպես հանցանք չդիտարկողները: Հարցվածների 7.3 տոկոսը «այլ» տարբերակում նշել են *«ոչ մի պատիժ»*՝ որոշ դեպքերում հավելելով պատասխանը կաշառք տվողին արդարացնող արտահայտություններով, ինչպես օրինակ՝ *«նա ստիպված է կամ շահում է»*, *«եթե չվերցնեն, սովող չի լինի»*, *«պատժի պետք է ենթարկել միայն կաշառք վերցնողին»*, *«մեկ-մեկ էլ այդպիսի բաներ են պետք որևէ արդյուքի հասնելու համար»*:

Հետաքրքրական է նաև այն, որ տղաները (55,6%) ավելի հակված են արդարացնել կաշառք տվողներին, քան աղջիկները (44,4%), ինչպես նաև քաղաքային համայնքի դպրոցների սովորողները (72,2%)՝ համեմատած գյուղական համայնքի (27,8%): Այդ է վկայում նաև այն, որ կաշառք տալու համար որպես պատիժ կարճաժամկետ կալանք սահմանածների 54 տոկոսը գյուղական դպրոցներում սովորող աշակերտներ են, իսկ 46-ը՝ քաղաքային:

Դեռահասների իրավագիտակցության ուսումնասիրության գործում կարևոր հարց է հանդիսանում այն, թե ինչպես են նրանք ընկալում պատիժը, նրա դերը արդարությունը վերականգնելու գործում: Այս նպատակով նրանց անաջադրվել էր հետևյալ հարցը. *«Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ են մարդկանց պատասխանատվության ենթարկում իրավական նորմերը/ օրենքները խախտելու համար»*:

Գծապատկեր #1.3. «Ինչո՞ւ են մարդկանց պատասխանատվության ենթարկում իրավական նորմերը / օրենքները խախտելու համար» հարցի պատասխանները



Աշակերտների մեծ մասը՝ 37.4%, պատժի հիմնական դերը տեսնում է մարդկանց մոտ օրենքի նկատմամբ հարգանք դաստիարակելու մեջ, որին հաջորդում է պատիժը որպես նախազգուշացում դիտարկողները:

Ստացված պատասխանները վկայում են դեռահասների մոտ պատժի ինստիտուտի վերաբերյալ միջերի լայն տարածման մասին: Նախազգուշացման ընդհանուր տեսության (20.9%) և պատժի վերադաստիարակիչ դերի նկատմամբ հավատի (17,2%):


Ինչպես վկայում է տվյալների վերլուծությունը աղջիկները համեմատաբար ավելի շատ են հակված դիտել պատիժը որպես նախազգուշացում և պաշտպանություն մյուսների համար, մինչդեռ տղաները ընկալում են պատիժը որպես վերադաստիարակման միջոց:

Աղյուսակ # 1.10. «Ինչո՞ւ են մարդկանց պատասխանատվության ենթարկում իրավական նորմերը / օրենքները խախտելու համար» հարցի պատասխանների բաշխումն ըստ սեռի և բնակավայրի (% տվյալ տարբերակը ընտրածների մեջ)

	արական	իգական	քաղաք	գյուղ	Ընդամենը
Մարդկանց մոտ օրենքի նկատմամբ հարգանք դաստիարակելու համար	41,8	58,2	56,2	43,8	100%
Պատիժը վերադաստիարակում է օրինախախտին	48,2	51,8	50,6	49,4	100%
Պատիժը հանդիսանում է օրինախախտներից պաշտպանություն մյուսների համար	35,0	65,0	57,5	42,5	100%
Պատիժը հանդիսանում է նախազգուշացում մյուսների համար	35,0	65,0	48,5	51,5	100%
Ուրիշներին պատժելով մարդիկ ուզում են ցույց տալ, որ իրենք հարգում են օրենքները	39,5	60,5	65,1	34,9	100%
Դժվարանում են պատասխանել	40,5	59,5	67,6	32,4	100%

Պատժի ինստիտուտի վերաբերյալ աշակերտների պատկերացումները ամբողջացնելու նպատակով նրանց առաջադրվել է պատժի և հանցանքների փոխկապվածության վերաբերյալ հարց. «Ըստ Ձեզ ինչպե՞ս կազդի պատասխանատվության խստացումը քրեական հանցագործությունների թվի վրա»:

Գծապատկեր #1.4. «Ինչպե՞ս կազդի պատասխանատվության խստացումը քրեական հանցագործությունների թվի վրա» հարցի պատասխանները



Հարցվածների զգալի մասը (54%) գտնում է, որ պատժի խստացումը կնվազեցնի հանցագործությունների թիվը, ինչը միանգամայն համաձայնեցված է նախորդ հարցի այն պատասխանի հետ, որ պատիժը հանդիսանում է նախազգուշացում մյուսների համար:

Մահապատժի վերացումը՝ որպես Եվրոպայի Խորհրդին Հայաստանի անդամակցության պայման, արդեն իսկ ընդունվել է և այլևս չի կիրառվում որպես ծանրագույն պատիժ: Սակայն հետաքրքիր է դիտարկել՝ ինչ մոտեցում ունեն դեռահասները այս երևույթի նկատմամբ: Այս հարցի շուրջ հարցվածների կարծիքները կիսվում են. հարցվածների գրեթե կեսը (49,2%) գտնում է, որ «մահապատիժը պետք է կիրառել որոշ ծանր հանցագործությունների դեպքում», մյուս կեսը (43.9%) համաձայն է այն մտքի հետ, որ «մահապատիժն անընդունելի է և այն պետք է փոխարինվի այլ պատժամիջոցներով»: Հարցված աշակերտների 3.6 տոկոսը գտնում է, որ «պետք է ավելի ընդլայնել մահապատժի կիրառման շրջանակները/դեպքերը», որից 55,6 տոկոսը կազմում են տղաները՝ բացահայտելով տղաների ավելի կոշտ դիրքորոշումը այս երևույթի նկատմամբ: Հետաքրքրական է նաև այն, որ մահապատժի շրջանակների ընդլայնման կողմնակիցների շրջանում գյուղական համայնքի բնակիչները ավելի շատ են, քան քաղաքային (55,6% և 44,4%՝ համապատասխանաբար):


Աղյուսակ # 1.11. « Ինչպե՞ս եք վերաբերվում մահապատժին» հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
մահապատիժը պետք է կիրառել որոշ ծանր հանցագործությունների դեպքում	243	49,2
մահապատիժն անընդունելի է, այն պետք է փոխարինվի այլ պատժամիջոցներով	217	43,9
պետք է ավելի ընդլայնել մահապատժի կիրառման շրջանակները / դեպքերը	18	3,6
դ/պ	15	3,0
այլ	1	0,2
Ընդամենը	494	100,0

Այսպիսով, ինչպես երևում է աղյուսակ #1.11.-ից, այս հարցի նկատմամբ վերաբերմունքի տեսակետից, հարցված աշակերտները բաժանվում երկու գրեթե հավասար խմբերի՝ մահապատժի կողմնակիցներ և մահապատժին դեմ արտահայտվողներ: Դիտարկենք այս երկու խմբերի ներսում պատժիչ համակարգի և նրա դերի նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև օրենքին հետևելու դրդապատճառները:

Գծապատկեր #1.5.-ում ներկայացված է երկու խմբերի պատկերացումները պատժի դերի նկատմամբ, այն է *«Ինչո՞ւ են մարդկանց պատասխանատվության ենթարկում իրավական նորմերը / օրենքները խախտելու համար»* հարցին:


Գծապատկեր #1.5. Մահապատժին «դեմ» և «կողմ» արտահայտվածների վերաբերմունքը *«Ինչո՞ւ են մարդկանց պատասխանատվության ենթարկում օրենքները խախտելու համար»* հարցին



Ինչպես երևում է գծապատկեր #1.5.-ից, այս երկու խմբերի միջև հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ մահապատժի կողմնակիցները գրեթե 1.5 անգամ ավելի հաճախ են համաձայնել *«պատիժը նախազգուշացում է մյուսների համար»* ձևակերպմանը, քան մահապատժին դեմ արտահայտվածները:


Հաջորդ հարցի հետ համադրումը ի հայտ է բերում հետաքրքիր և հակասական պատկեր: Ի տարբերություն նախորդ հարցի, որտեղ մահապատժին կողմ արտահայտվածները ավելի հակված են պատիժը որպես նախազգուշացում դիտարկել, այս դեպքում պատժի խստացումը, հակառակ սպասվածի, մահապատժին դեմ արտահայտվածների մոտ է ավելի ուժեղ կապ արձանագրում հանցագործությունների թվի նվազման հետ:

Գծապատկեր #1.6. Մահապատժին «դեմ» և «կողմ» արտահայտվածների վերաբերմունքը «Ինչպե՞ս կազդի պատասխանատվության խստացումը հանցագործությունների թվի վրա» հարցին



Եվ վերջին հարցը, որի հետ համադրումը հետաքրքրություն է ներկայացնում դեռահասների իրավագիտակցության ուսումնասիրության տեսանկյունից, այս երկու խմբերի օրենքներին հետևելու դրդապատճառներին է վերաբերում:

Գծապատկեր #1.7. Մահապատժին «դեմ» և «կողմ» արտահայտվածների պատասխանները «Ե՞րբ է պետք հետևել օրենքներին» հարցին



Ինչպես երևում է գծապատկեր #1.7.-ից, մահապատժի կողմնակիցների շրջանում ավելի

շատ են բոլոր դեպքերում օրենքներին հետևելու կողմնակիցները, մինչդեռ մահապատժին դեմ արտահայտվողների շրջանում համեմատաբար ավելի շատ են որոշակի պայմանների դեպքում օրենքին հետևելու կողմնակիցները՝ *«երբ օրենքները համապատասխանում են իմ և իմ շրջապատի պատկերացումներին»* և *«երբ օրենքները համահունչ են հասարակության ավանդույթներին»*:

1.1.3. Մարդու իրավունքների խնդրի նկատմամբ վերաբերմունքը

Աշակերտների վերաբերմունքը մեր երկրում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, ինչպես նաև մարդու իրավունքների կարևորման ուսումնասիրության նպատակով կազմվել է ցանկ` կազմված հիմնական մարդու իրավունքներից: Հարցման հիմքում դրված են Մարդու իրավունքների և Հիմնարար Ազատությունների Պաշտպանության Մասին Եվրոպական Կովենցիայով և դրան կից արձանագրություններով երաշխավորված 12 իրավունք:

Ինչպես ցույց տվեց տասներորդիների շրջանում անցկացված հարցումը, Հայաստանում առավել հաճախ խախտվող իրավունքների շարքը գլխավորում է *«ազատ ընտրությունների իրավունքը»*. հարցվածների գրեթե 2/3 նշել են այս տարբերակը: Երկրորդ տեղում է *«արդարացի դատաքննության իրավունքը»* (45,1%): Չնչին տարբերությամբ միմյանց հաջորդում են *«խոշտանգումների չենթարկվելու իրավունքը»* (32,8%), *«խոսքի ազատության և տեղեկություններ փնտրելու, ստանալու իրավունքը»* (32,6%) և *«ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը»* (30%):

Հարցվածներին առաջարկվել է նաև թվարկված մարդու իրավունքներից և ազատություններից առանձնացնել նրանք, որոնք *«առավել կարևոր են համարում մարդկանց արժանավայել կյանքի համար»*: Իրավունքները և ազատությունները նույն 12 էին, հարցվողները հնարավորություն ունեին ընտրել առավելագույնը 5 տարբերակ: Այս երկու հարցի վերաբերյալ ստացված արդյունքները ամփոփված և կարգաբերված են մեկ աղյուսակում (տե՛ս Աղյուսակ # 1.12.):

Հարցված աշակերտների գնահատմամբ թվարկված մարդու իրավունքներից և ազատություններից արժանավայել կյանքի համար ամենից կարևորը *«ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը»* է, որին հաջորդում է *«անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը»*: Այս երկու անձնական բնույթի ազատությանը և իրավունքին զարմանալիորեն հաջորդում է քաղաքական և քաղաքացիական բնույթի իրավունք` *«ազատ ընտրությունների իրավունքը»*, որը կարևորել են հարցվածների գրեթե կեսը (49.2%):

Սղյուսակ # 1.12. Հայաստանում առավել հաճախ ուտնահարվող և մարդկանց արժանավայել կյանքի համար առավել կարևոր իրավունքները


#	Ո՞ր իրավունքներն են առավել հաճախ խախտվում Հայաստանում	տոկոս	տոկոս	Ո՞ր իրավունքներն են առավել կարևոր մարդկանց արժանավայել կյանքի համար	#
1.	Ազատ ընտրությունների իրավունք	59,5	55,5	Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք	1.
2.	Արդարացի դատաքննության իրավունք	45,1	52,6	Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	2.
3.	Խոշտանգումների չենթարկվելու իրավունք	32,8	49,2	Ազատ ընտրությունների իրավունք	3.
4.	Խոսքի ազատության և տեղեկություններ փնտրելու, ստանալու իրավունք	32,6	42,5	Մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք	4.
5.	Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք	30	41,7	Արդարացի դատաքննության իրավունք	5.
6.	Սեփականության պաշտպանության իրավունք	23,1	39,3	Սեփականության պաշտպանության իրավունք	6.
7.	Խտրականության արգելում	22,5	35	Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք	7.
8.	Մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք	21,5	32,4	Խոշտանգումների չենթարկվելու իրավունք	8.
9.	Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	20,6	31,4	Խոսքի ազատության, տեղեկություններ փնտրելու, ստանալու իրավունք	9.
10.	Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք	15,4	19,6	Խտրականության արգելում	10.
11.	Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	15	11,7	Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք	11.
12.	Հավաքների և միավորումների ազատության իրավունք	15	6,3	Հավաքների և միավորումների ազատության իրավունք	12.

Այսպիսով, վերլուծելով երկու հարցերին ստացած պատասխանների առաջին հնգյակները, կարելի է փաստել, որ հարցված աշակերտների մոտ նշմարվում է հետևյալ մոտեցումը. իրավունքները և ազատությունները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի: Մի խումբը (ազատ ընտրությունների իրավունք, արդարացի դատաքննության իրավունք, խոսքի ազատության և տեղեկություններ փնտրելու, ստանալու իրավունք, խոշտանգումների չենթարկվելու իրավունք) բնութագրվում է նրանով, որ նրանց կարևորությունը համաչափ է դրանց ուտնահարմանը Հայաստանում, իրավունքների մյուս խումբը (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) կարևորվում է ինքնին, անկախ այդ իրավունքների և ազատությունների ուտնահարումից:

Այս ամենի հետ մեկտեղ, կարևոր է պարզել աշակերտների ինքնազգացողությունը, այն է՝ որքանով են նրանք իրենց պաշտպանված զգում տարբեր բնույթի իրավախախտումներից: Նրանց առաջարկվել է գնահատել իրենց ինքնազգացողությունը «*Ձեզ օրենքով պաշտպանված համարո՞ւմ եք*» հարցի միջոցով,

հետևյալ սանդղակով՝ միանգամայն այո=1, բոլորովին ոչ=4, որոշ չափով այո=2, որոշ չափով ոչ= 3:


Գծապատկեր #1.8. «Ձեզ օրենքով պաշտպանված համարո՞ւմ եք» հարցի պատասխանները



Հարցվածների գերակշիռ մասը՝ 60.3 տոկոսը, իրեն միայն որոշ չափով է համարում օրենքով պաշտպանված, աշակերտների միայն 11.7 տոկոսն է իրեն օրենքով լիովին պաշտպանված զգում: Հարկ է նշել, որ այս հարցը իր բնույթով շատ սուբյեկտիվ է՝ հիմնված յուրաքանչյուրի ինքնազգացողության վրա:

Այս բաժնի հաջորդ հարցը վերաբերում է մարդու իրավունքների սահմանափակմանը: Հարցվողները առաջարկվող տարբերակներից պետք է ընտրեին այն իրավիճակները, որոնց դեպքում թույլատրելի են համարում մարդու իրավունքների սահմանափակումը:

Գծապատկեր #1.9. «Ո՞ր դեպքերում է թույլատրելի մարդու իրավունքների սահմանափակումը»



Ինչպես երևում է գծապատկեր #1.9.-ից հարցված աշակերտները պատրաստ են թույլ տալ մարդու իրավունքների սահմանափակումը առաջին հերթին «կարգ ու կանոն և

կայունություն պահպանելու համար», այնուհետև «այլ մարդու իրավունքները պաշտպանելու համար»: Ոչ մի պարագայում թույլ չեն տա մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակում հարցվածների 20.2 տոկոսը:

Պատասխանները վկայում են այն մասին, որ, մի կողմից, բավականին ուժեղ են տոտալիտար գիտակցության տարրերը (47,6% և 29.4%), մյուս կողմից՝ աշակերտների համար հոգեհարազատ է մարդկանց իրավունքների փոխազդեցության և հավասարակշռության գաղափարը (43,1% և 22.1%): Ջգալի մաս են կազմում այս հարցին պատասխանել դժվարացողները (7,1%):

Աշակերտների կողմից մարդու իրավունքների և ազատությունների ընկալումը պարզելու համար նրանց առաջադրվել էին իրավիճակներ, որոնցից նրանք պետք է առանձնացնեին նրանք, որոնք, ըստ իրենց, հանդիսանում են մարդու իրավունքների խախտում:


Սղյուսակ # 1.13. «Ստորև թվարկված իրավիճակներից որո՞նք են Ձեր կարծիքով հանդիսանում մարդու իրավունքների խախտում» հարցի պատասխանները

		քանակը	տոկոսը
1.	որոշ թանգարաններում մուտքի տոմսերի արժեքը օտարերկրյա այցելուների համար ավելի բարձր է, քան տեղացիների համար	260	52.6
2.	ժամը 23:00-ից մինչև առավոտյան 8:00-ը չի թույլատրվում միացնել երաժշտությունը այնքան բարձր, որ այն լսեն հարևանները	115	40.3
3.	աշխատանքի ընդունման որոշ հայտարարություններում նշվում են տարիքային և սեռային սահմանափակումներ	113	36.6
4.	որոշ երկրներ այցելելու համար մարդիկ պետք է մուտքի իրավունք (վիզա) ստանան	181	27.9
5.	որոշ մարդիկ ապրում են բազմաբնակարան բնակարաններում, իսկ որոշ մարդիկ՝ սեփական առանձնատներում	199	23.3
6.	իշխանական մարմիններում գերակշռում են տղամարդիկ	138	22.9
7.	ոչ մեկը	6	1.2

Ազատական գաղափարախոսությունը (1-ին և 3-րդ տարբերակները) սովորողների մոտ զբաղեցնում է գերակշիռ մաս, մինչդեռ սոցիալիստական (4-րդ, 5-րդ և 6-րդ տարբերակները) մոտեցումը գիջում է աշակերտների գիտակցության մեջ: Ջգալի մաս են կազմում եսակենտրոն (2-րդ տարբերակ) արժեքներով պայմանավորված ընտրությունը:

Գաղափարական տարբերությունները առավել ցայտուն են դրսևորվում պետության տնտեսական քաղաքականության նկատմամբ վերաբերմունքի մեջ: Այդ իսկ նպատակով աշակերտներին առաջադրվել էր հետևյալ հարցը. «Ինչպե՞ս պետք է գործի պետությունը աշխատանքի և զբաղվածության ոլորտում»:

Գծապատկեր #1.10. «Ինչպե՞ս պետք է գործի պետությունը աշխատանքի և զբաղվածության ոլորտում» հարցի պատասխանները



Ինչպես ակնհայտորեն երևում է ստացված արդյունքներից, աշխատանքի և զբաղվածության հարցում սոցիալիստական գաղափարախոսությունը զգալիորեն գերակշռում է աշակերտների գիտակցության մեջ: Երաշխիքների և համահարթեցման քաղաքականությունն են ընտրում հարցվածների 57.1 տոկոսը: Սոցիալ-դեմոկրատական մոտեցման կողմնակիցներ են հարցվածների 1/4 (20.9%), որից գրեթե 2/3 աղջիկներ են: մինչդեռ ազատական շուկայական հարաբերությունների կողմնակից են հարցվածների ընդամենը 5.5 տոկոսը: Ջգալի թիվ են կազմում այս հարցի նկատմամբ դիրքորոշում արտահայտել դժվարացողները՝ 9.5 տոկոս:

Ջգալիորեն շատ են սոցիալ-դեմոկրատական մոտեցման կողմնակիցները տղաները հարցված տղաների շրջանում (67,9% և 32,1%՝ համապատասխանաբար):

Աղյուսակ # 1.14. «Ինչպե՞ս պետք է գործի պետությունը աշխատանքի և զբաղվածության ոլորտում» հարցի պատասխանների բաշխումն ըստ սեռի և բնակավայրի (% տվյալ տարբերակը ընտրածների մեջ)

Ընդհանուր	Բնութագրիչ	Բնակավայր				Ընդամենը
		արական	իգական	քաղաք	գյուղ	
1.	Ապահովել բոլորին աշխատանքով՝ աշխատավարձի չնչին տարբերությամբ	38,7	61,0	53,5	46,5	100%
2.	Օգնել մարդկանց գտնել աշխատանք և սահմանել բարձր հարկեր	35,9	64,1	54,4	45,6	100%
3.	Չերաշխավորել աշխատանքի տեղավորում, բայց բարձր հարկերի հաշվին նպաստներ սահմանել ցածր աշխատավարձ ունեցողների համար	67,9	32,1	60,7	39,3	100%
4.	Աշխատանքի շուկան ամբողջովին ազատ դարձնել, առանց աշխատանքի և վարձատրության երաշխիքների	48,1	51,9	33,3	66,7	100%
5.	Դժվարանում են պատասխանել	46,8	53,2	78,7	21,3	100%
6.	Այլ	16,7	83,3	66,7	33,3	100%

Կարևոր հարցերից մեկը, որին հանգում ենք իրավագիտակցությունն ուսումնասիրելիս, պետական կառուցվածքի ընտրությունն է, այն է՝ ո՞ւմ պետք է պատկանի պետության բարձրագույն իշխանությունը՝ միանձնյա կառավարչին, թե կոլեգիալ մարմնին: Այս հարցի ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ հանրապետությունը՝ որպես պետության ձև, ենթադրում է քաղաքացիության ինստիտուտ, մինչդեռ միապետությունը՝ հպատակության, ինչն էլ իր հերթին հանգեցնում է անհատի իրավական կարգավիճակի սկզբունքային տարբերությունների:

Այսպիսով, աշակերտների պատկերացումները և մոտեցումները պետական կառուցվածքի վերաբերյալ եզրափակում է հետևյալ հարցը. «*Ըստ Ձեզ ո՞ր պետական կառուցվածքն է առավել հարմար մարդկանց համար*»:

Աղյուսակ # 1.15. «*Ո՞ր պետական կառուցվածքն է առավել հարմար մարդկանց համար*» հարցի պատասխանների բաշխումն ըստ սեռի և բնակավայրի (% տվյալ տարբերակը ընտրածների մեջ)

	տոկոսը	արական	իգական	քաղաք	գյուղ	Ընդամենը
Պետությունը ղեկավարվում է նախագահի կողմից, որի իշխանությունը սահմանափակված է Սահմանադրությամբ	48.6	35,8	63,8	54,2	45,8	100%
Պետությունը ղեկավարվում է միապետի կողմից, որի իշխանությունը սահմանափակված է Սահմանադրությամբ	14.4	50,7	49,3	40,8	59,2	100%
Պետությունը ղեկավարվում է ընտրովի խորհրդարանի կողմից	13.4	47,0	53,0	62,1	37,9	100%
Դժվարանում են պատասխանել	10.1	36,0	64,0	68,0	32,0	100%
Պետությունը ղեկավարվում է միապետի (կայսրի) կողմից, որն ունի անսահմանափակ իշխանություն	5.9	41,4	58,6	58,6	41,4	100%
Պետությունը ղեկավարվում է հոգևոր առաջնորդի կողմից (Հռոմի Պապ, Ամենայն Հայոց Կաթողիկոս)	4.0	60,0	40,0	60,0	40,0	100%
Պետությունում ոչ մի իշխանություն չկա	3.0	33,3	66,7	60,0	40,0	100%
Այլ	0.6	33,3	66,7	66,7	33,3	100%
Ընդամենը	100 %					

Հարցվածների գրեթե կեսը (48,6%) նախագահական պետության կողմնակից է, ընդ որում աղջիկներն ավելի շատ, քան տղաները (63,8% և 35,8%՝ համապատասխանաբար): Երկրորդ տեղում, զգալի տարբերությամբ, սահմանափակ իշխանությամբ միապետական կառուցվածքն է (14.4%), որին, ի տարբերություն նախագահական կառուցվածքի, կողմնակից են ավելի շատ տղաները, քան՝ աղջիկները (50,7% և 49,3%՝ համապատասխանաբար): Հարցվածների միայն 13.4 տոկոսն է

խորհրդարանական պետության կողմնակից: Ինչպես ակնհայտորեն երևում է աղյուսակ #1.15.-ից ակնհայտ կապ կա բնակավայրի տիպի և պետական կառուցվածքի նախապատվությունների միջև: Այսպես, գյուղական համայնքի ներկայացուցիչները համեմատաբար ավելի մեծ բաժին են կազմում միապետական կառուցվածքի կողմնակիցների շրջանում (59,2% և 40,8%` համապատասխանաբար), մինչդեռ երկրի խորհրդարանական` կոլեգիալ իշխանության կողմնակիցների շրջանում գերիշխում են քաղաքային համայնքների աշակերտները (62,1% և 37,9%` համապատասխանաբար): Այս հարցի պարագայում ևս զգալի մաս են կազմում հարցին պատասխանել դժվարացողները (10%):

ԲԱԺԻՆ II

Երեխաների իրավունքները տանը և դպրոցում

2.1. Երեխաների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը

15-17 տարիքային խմբի դեռահասները իրենց ժամանակի գերակշիռ մասը անց են կացնում ընտանիքում և դպրոցում, որտեղ և տեղի են ունենում նրանց հիմնական շփումները ինչպես մեծերի, այնպես էլ իրենց հասակակիցների հետ: Եվ այս երկու ինստիտուտներում է, որ նրանք կարող են առնչվել իրենց իրավունքների ոտնահարման երևույթի հետ՝ գիտակցելով, կամ չգիտակցելով այն:

Իրավիճակը և դրա ընկալումը պարզելու նպատակով դեռահասներին առաջադրվել է հետևյալ հարցը. *«Ձեր ուսումնական հաստատությունում հարգվո՞ւմ են Ձեր իրավունքները»:*

Աղյուսակ # 2.1. *« Ձեր ուսումնական հաստատությունում հարգվո՞ւմ են Ձեր իրավունքները»* հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
հարգվում են միշտ կամ գրեթե միշտ	180	36.4
իմ իրավունքները մեր դպրոցում հազվադեպ են խախտվում	208	42.1
իմ իրավունքները մեր դպրոցում հաճախ խախտվում են	64	13.0
իմ իրավունքները մեր դպրոցում միշտ կամ գրեթե միշտ խախտվում են	13	2.6
դժվարանում են պատասխանել	29	5.9
Ընդամենը	494	100.0

Հաջորդ հարցը վերաբերում է ընտանիքին *«Ձեր ընտանիքում հարգվո՞ւմ են Ձեր իրավունքները»:*

Աղյուսակ # 2.2. *« Ձեր ընտանիքում հարգվո՞ւմ են Ձեր իրավունքները»* հարցի պատասխանները


	քանակը	տոկոսը
հարգվում են միշտ կամ գրեթե միշտ	345	69.8
իմ իրավունքները մեր ընտանիքում հազվադեպ են խախտվում	110	22.3
իմ իրավունքները մեր ընտանիքում հաճախ խախտվում են	18	3.6
իմ իրավունքները մեր ընտանիքում միշտ կամ գրեթե միշտ խախտվում են	6	1.2
դժվարանում են պատասխանել	15	3.0
Ընդամենը	494	100.0

Ինչպես երևում է այս երկու աղյուսակների տվյալների համեմատությունից, դպրոցի պարագայում ամենատարածված պատասխանը *«իմ իրավունքները մեր դպրոցում հազվադեպ են խախտվում»* (42,1%), մինչդեռ ընտանիքի դեպքում՝ *«հարզվում են միշտ կամ գրեթե միշտ»* (69,8%) պատասխանն է գերակշռում: Դպրոցի վերաբերյալ *«իմ իրավունքները հաճախ են խախտվում»* և *«իմ իրավունքները խախտվում են միշտ կամ գրեթե միշտ»* ստացված պատասխանները գումարային կազմում են 15.6 տոկոս, ընտանիքի դեպքում՝ 4.8 տոկոս: Հուշագրավ է նաև այն, որ դպրոցում իրավունքների պաշտպանության/ոտնահարման վերաբերյալ պատասխանել դժվարացողները կրկնակի անգամ ավել են՝ քան ընտանիքի:

Հարցին պատասխանել դժվարացողների թիվը էլ ավելի է մեծանում, երբ հարցն ավելի կոնկրետ է ձևակերպված և մասնավորեցում և/կամ իրավիճակի նկարագրություն է պահանջում. *«Ձեր ո՞ր իրավունքներն են ոտնահարվում Ձեր ուսումնական հաստատությունում»*: Այս հարցին դժվարացել են պատասխանել հարցվածների գրեթե 30 տոկոսը, իսկ մոտ 60 տոկոսը նշել է որ *«իմ իրավունքները մեր դպրոցում չեն ոտնահարվում»* և միայն 10 տոկոսն է այս կամ այն կերպ մասնավորեցրել պատասխանը: Բաց հարցին ստացված պատասխանների վերլուծությունը ցույց տվեց, որ այս հարցին պատասխանած աշակերտների կեսը նշել են ուսուցիչների կողմից իրենց նկատմամբ խտրական և կողմնապահ վերաբերմունքը և անարդարացի գնահատելու փաստը: Աշակերտների 1/5 (22.3%) նշել են տարբեր բնույթի վիրավորանքներ և նվաստացնող վերաբերմունք ուսուցիչների կողմից: Խոսքի ազատության սահմանափակման հետ կապված խնդիրներ են նշել 16,7 տոկոսը: Հավասար թվով աշակերտներ (5.5%) նշել են հազնվելու հետ կապված սահմանափակումներ և ուսուցման համար անբարենպաստ պայմաններ, ինչպես օրինակ *«դասարանում ցուրտ է»*:

Ինչպես ցույց տվեց ուսումնական հաստատությանը վերաբերող երկու հարցերից ստացված արդյունքների համադրումը գծապատկերի միջոցով, երկրորդ հարցին *«իմ իրավունքները մեր դպրոցում չեն ոտնահարվում»* պատասխանածները կազմում են այն հարցվածները, որոնք նախորդ հարցին պատասխանել են *«իմ իրավունքները մեր դպրոցում հարզվում են միշտ, կամ գրեթե միշտ»* և *«իմ իրավունքները մեր դպրոցում հազվադեպ են խախտվում»*:

Գծապատկեր # 2.1. «Ձեր ուսումնական հաստատությունում հարգվո՞ւմ են Ձեր իրավունքները» և «Ձեր ո՞ր իրավունքներն են ոտնահարվում Ձեր ուսումնական հաստատությունում» հարցերի համադրումը




Այն աշակերտները, որոնք դժվարացել են մասնավորեցնել պատասխանը և որպես հեշտ միջոց ընտրել են «իմ իրավունքները չեն ոտնահարվում» տարբերակը, հակասելով իրենց նախորդ տված պատասխանին, կազմում են 42.7 տոկոսը:

Այս շարքի հարցերի երկրորդ խումբը, ինչպես արդեն նշվել էր, վերաբերում էր ընտանիքում երեխաների իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքին: Եվ հաջորդ հարցում հարցվողներին խնդրել էինք մասնավորեցնել, թե «Ձեր ո՞ր իրավունքներն են ոտնահարվում ընտանիքում»: Այս հարցին հարցվածների 81.2 տոկոսը պատասխանել է, որ «իմ իրավունքները մեր ընտանիքում չեն ոտնահարվում»: Թեև նախորդ հարցին 22.3 տոկոսը պատասխանել է, որ իր իրավունքները ընտանիքում հազվադեպ խախտվում են: Հաջորդ հարցին միայն 4 տոկոսն է այս կամ այն կերպ մասնավորեցրել իր ընկալմամբ իրավախախտումը: Բաց հարցին տված պատասխանները հիմնականում վերաբերում են անձնական ազատությանը, ինչպես օրինակ՝ «ազատ ընտրելու և ինքնուրույն ապրելու», «ազատության իրավունք»: Ինչպես և դպրոցի պարագայում, կրկին զգալի մաս են կազմում հարցին պատասխանել դժվարացողները (14.8%):

Այս երկու հարցերին տված պատասխանների համադրումը, որը ներկայացված է Գծապատկեր #10-ում, ևս առաջ է բերում մի շարք հակասություններ:

Գծապատկեր #2.2. «Ձեր ընտանիքում հարգվո՞ւմ են Ձեր իրավունքները» և «Ձեր ո՞ր իրավունքներն են ուտնահարվում Ձեր ընտանիքում» հարցերի համադրումը



Հարցված աշակերտների այն մասը, որը առաջին հարցին տվել է *«իմ իրավունքները մեր ընտանիքում հարգվում են միշտ կամ գրեթե միշտ»*, հաջորդ հարցին պատասխանելիս փորձել է, այնուամենայնիվ, մասնավորեցնել, թե իր որ իրավունքն է ոտնահարվել կամ նկարագրել իրավիճակը: Եվ հակառակը, *«իմ իրավունքները մեր ընտանիքում չեն ոտնահարվում»* տարբերակը ընտրածների 21.7 տոկոսը նախորդ հարցին պատասխանել էին, որ իրենց իրավունքները *«խախտվում են հազվադեպ»*:

Այս հակասությունները կարելի է բացատրել նրանով, որ երեխաները մի կողմից՝ չգիտեն իրենց իրավունքները և, համապատասխանաբար, չեն կարողանում որակել այս կամ այն վերաբերմունքը կամ իրավիճակը որպես իրենց իրավունքների և ազատությունների ոտնահարում, մյուս կողմից, անգամ գտնելով, որ իրենց իրավունքները ոտնահարվել են, դժվարանում են այն հստակեցնել՝ այնուամենայնիվ ունենալով իրավագրկության և անիրավության զգացողություն:

Դեռահասների անիրավության զգացումը, որն ի հայտ եկավ նախորդ հարցերից ստացված արդյունքներից ապացուցվում է նաև այս բաժնին վերաբերող մեկ այլ հարցի միջոցով. *«Ձեր կարծիքով երեխաներին հարկավո՞ր են ինչ-որ հատուկ իրավունքներ, որոնք չունեն մեծերը»*: Այս հարցին միանշանակ բացասական պատասխան են տվել աշակերտների մոտ 40%, իսկ 30% առհասարակ դժվարացել է պատասխանել: Դրական պատասխանած մնացած մասից (մոտ 30%) միայն 9.5 տոկոսն է կարողացել այս կամ այն կերպ մասնավորեցրել իրենց պատասխանը՝ *«այո, երեխաներին հարկավոր են իրավունքներ, որոնք չունեն մեծերը»*:

Ինչպես ցույց էր տվել փորձնական հարցումը, այնպես էլ հիմնական հետազոտության ժամանակ ստացված արդյունքները, աշակերտների շրջանում բավականին ակտուալ է խոսքի ազատության սահմանափակման խնդիրը: Այս տեսանկյունից հետաքրքրական է հետևյալ հարցը. *«Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ կարող է սահմանափակվել երեխայի՝ իր կարծիքը արտահայտելու իրավունքը»:*

Աղյուսակ #2.3. *«Ինչո՞վ կարող է սահմանափակվել երեխայի՝ իր կարծիքը արտահայտելու իրավունքը»* հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
այն կարող է սահմանափակվել հասարակության ավանդույթներով	208	42.1
այն կարող է սահմանափակվել միայն այնքանով, որ չվիրավորել ուրիշին	256	51.8
այն կարող է սահմանափակվել միայն օրենքներով	85	17.2
այն չի կարող ոչ մի կերպ սահմանափակվել	67	13.6
դ/պ	35	7.1

Զնայած դեռահասների մոտ վերը նշված անիրավության զգացողությանը, այս հարցի առնչությամբ աշակերտների մեծ մասը այնուամենայնիվ գտնում է, որ երեխայի կարծիքը արտահայտելու իրավունքը այնուամենայնիվ կարող է սահմանափակվել այս կամ այն դեպքում, և միայն հարցվածների 13.6 տոկոսն է գտնում, որ *«այն չի կարող ոչ մի կերպ սահմանափակվել»:* Որպես սահմանափակման հիմք առաջին հերթին նշվում է *«այն կարող է սահմանափակվել միայն այնքանով, որ չվիրավորել ուրիշին»* (51,8 %) տարբերակը, երկրորդ հերթին՝ *«այն կարող է սահմանափակվել հասարակության ավանդույթներով (ընդունված չէ, որ երեխան միջամտի մեծահասակների խոսակցությանը և կարծիք հայտնի)»* (42,1%):

Այս բաժնի վերջին հարցը վերաբերում է արժեքներին, որոնք նրանք կարևորում են կյանքում. *«Ի՞նչն է առավել կարևոր այն ամենից, ինչ կարող են անել ծնողները իրենց երեխայի համար»:*

Աղյուսակ #2.4. *«Ի՞նչն է առավել կարևոր այն ամենից, ինչ կարող են անել ծնողները իրենց երեխայի համար»* հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
հնարավորինս առողջ զավակ մեծացնել	336	68.0
օգնել կրթություն և մասնագիտություն ստանալ	327	66.2
սովորեցնել տարբերակել չարն ու բարին	202	40.9
սովորեցնել ինքնուրույն որոշումներ կայացնել	168	34.0
իրենց կյանքի փորձը փոխանցել	107	21.7
ապահովել նյութական բարեկեցություն	84	17.0

Առաջին երկու տեղը զբաղեցրած և գրեթե հավասար չափով դեռահասների կողմից կարևորվող արժեքներն են *«հնարավորինս առողջ զավակ մեծացնել»* և *«օգնել կրթություն ստանալն»* է, որոնք բավականին հստակ են և ուղղված են կյանքում երեխայի հնարավորությունների ընդլայնմանը: Ավելի քիչ տոկոս են ստացել վերացական արժեքները՝ *«սովորեցնել տարբերակել չարն ու բարին»* և *«սովորեցնել ինքնուրույն որոշումներ կայացնել»*, և «պարտաստի կերպով փոխանցվող» արժեքները՝ *«փոխանցել կյանքի փորձը»* և *«ապահովել նյութական բարեկեցությամբ»*:

ԲԱԺԻՆ III

Իրավական գիտելիքները և իրավունքի դասավանդումը

3.1. Իրավունքի դասավանդման նկատմամբ վերաբերմունքը

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս պնդել, որ աշակերտները կարևորում են իրավունքի դասավանդումը դպրոցում: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները 10-րդ դասարանի աշակերտների 76.3 տոկոսը գտնում է, որ «դպրոցում «Իրավունք» ուսումնական բնագավառը անպայման պետք է դասավանդվի»: Հարցվածների 10.5 տոկոսը գտնում է, որ «այն պետք է դասավանդվի ֆակուլտատիվ», և միայն 5.1 տոկոսն է համարում, որ «այն անհիմաստ է ուսումնասիրել»:

Այն հարցին, թե «Ո՞ր հարցերն են համարում առավել կարևոր «Իրավունք» ուսումնական բնագավառի շրջանակներում ուսումնասիրելու համար», գրեթե հավասար թվով աշակերտներ կարևորել են «Իրավունքի պատմությունը և նրա դերը մարդկանց կյանքում» և «Մարդու իրավունքները և դրա պաշտպանությունը» (48%): Սա կարող է պայմանավորված լինել մի կողմից հասարակությունում այդ իրավունքների հաճախակի ոտնահարման զգացողության հետ, մյուս կողմից լայն ձևակերպմամբ և հասկացության լայն ընկալման արդյունք:

Աղյուսակ # 3.1. «Ո՞ր հարցերն են համարում առավել կարևոր «Իրավունք» ուսումնական բնագավառի շրջանակներում ուսումնասիրելու համար» հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
Իրավունքի պատմությունը և նրա դերը մարդկանց կյանքում	240	48.6
Մարդու իրավունքները և դրա պաշտպանությունը	239	48.4
Քրեական իրավունք, օրենք, պատիժ	166	33.6
Ժամանակակից հայաստանյան սահմանադրական իրավունքը, Հայաստանի պետական կառուցվածքը	148	30.0
Տնտեսական իրավունք, աշխատանքային իրավունք, պայմանագրեր, սեփականություն	109	22.1
Ընտանեկան իրավունք	102	20.6
Արտասահմանյան երկրների իրավունքը, միջազգային իրավունքը	75	15.2
դժվարանում են պատասխանել	47	9.5

Քրեական իրավունքի և պատժի նկատմամբ մեծ հետաքրքրությունը, համեմատած տնտեսական իրավունքի հետ, վկայություն է և արտացոլումն է նաև այն փաստի, որ աշակերտների կողմից չի գիտակցվում տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորման կարևորությունը ժամանակակից հասարակությունում: Արդյունքները նաև վկայում են, որ տասներորդիները երկու անգամ ավելի շատ են կարևորում տեղական, քան միջազգային իրավունքի և փորձի ուսումնասիրությունը:

Իրավունքի ուսումնասիրության գիտակցված դրդապատճառները պարզելու համար աշակերտներին առաջարկվել է հետևյալ հարցը. *«Ըստ Ձեզ, ինչո՞ւ է պետք ուսումնասիրել իրավագիտությունը»:*

Աղյուսակ # 3.2. *«Ինչո՞ւ է պետք ուսումնասիրել իրավունքը»* հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
որպեսզի իմանալ սեփական իրավունքները և կարողանալ դրանք պաշտպանել	204	41.3
որպեսզի իմանալ և հարգել ուրիշի իրավունքները	114	23.1
որպեսզի ավելի լավ հասկանալ հասարակության կյանքը	64	13.0
որպեսզի ավելի լավ հասկանալ մարդկանց	60	12.1
դժվարանում են պատասխանել	26	5.3
որպեսզի հասարակությունը զարգանա	25	5.1
այլ	1	0.2
Ընդամենը	494	100.0

Որպես իրավունքի ուսումնասիրության առաջնահերթ նպատակ աշակերտները ընտրել են *«որպեսզի իմանալ սեփական իրավունքները և կարողանալ դրանք պաշտպանել»* (41,3%) տարբերակը: Երկու անգամ քիչ թվով աշակերտներ ընտրել են *«որպեսզի իմանալ և հարգել ուրիշի իրավունքները»* (23,1%): Վերացական դրդապատճառները, ինչպիսիք են *«որպեսզի ավելի լավ հասկանալ հասարակության կյանքը»* և *«որպեսզի ավելի լավ հասկանալ մարդկանց»* տարբերակները, համեմատաբար ցածր տոկոս են կազմում: Պատասխաններից ակնհայտորեն հետևում է, որ ընտրելով մարդու իրավունքները՝ որպես առավել կարևոր թեմա ուսումնասիրության համար (նախորդ հարց), սովորողները առաջին հերթին կարևորում են այդ գիտելիքների կիրառական ասպեկտին:

Իրավունքի դասավանդմանը աշակերտների վերաբերմունքը բացահայտմանն ուղղված այս բաժինը եզրափակվում է հետևյալ հարցով: Հարցվողներին առաջարկվել են մի շարք դատողություններ և առաջարկել արտահայտել իրենց համաձայնությունը ստորև բերված պնդումներին:

Աղյուսակ # 3.3 Իրավունքի ուսուցման նկատմամբ վերաբերմունքը

	քանակը	տոկոսը
Հնարավոր չէ կառուցել հարուստ հասարակություն, եթե այդ երկրում ոտնահարվում են մարդու իրավունքները	313	63.4
Մարդկանց իրավունքները ինքնըստինքյան կհարգվեն, երբ կունենանք հարուստ հասարակություն	119	24.1
Անօգուտ է ուսումնասիրել այլ երկրներում մարդու իրավունքների խախտումները, կարևորը այն է՝ ինչ կատարվում է այստեղ՝ մեր երկրում	111	22.5
Մարդկանց արժանավայել կյանքի համար կարևորը ոչ թե մարդու իրավունքներն են, այլ իրական եկամուտների ստացումը	82	16.6
Անիմաստ է ուսումնասիրել մարդու իրավունքները, իրական կյանքը այլ կերպ է դասավորված	65	13.2
Իրավունքի ուսումնասիրությունը անօգուտ է, այդ գիտելիքները մեզ ոչ մի օգուտ չեն տա	45	9.1

Ուրախացնող է աշակերտների զգալի մասի կողմից (63,4%) մարդու իրավունքների կարևորության ընկալումը բարեկեցիկ հասարակություն կառուցելու հարցում: Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, իրավունքի ուսումնասիրության անիմաստության օգտին դատողությունները ևս զգալի տոկոս են կազմում: Այս դատողությունները զանազանվում են, սկսած ամենաձայրահեղականից՝ «*իրավունքի ուսումնասիրությունը անօգուտ է, այդ գիտելիքները մեզ ոչ մի օգուտ չեն տա*» (9,1%), «*անիմաստ է ուսումնասիրել մարդու իրավունքները, իրական կյանքը այլ կերպ է դասավորված*» (13,2%), և վերջացրած տնտեսական դետերմինիզմով՝ «*մարդկանց իրավունքները ինքնըստինքյան կհարգվեն, երբ կունենանք հարուստ հասարակություն*» (24,1%):

Սակայն այս հարցում ևս ի հայտ է գալիս աշակերտների հակասական վերաբերմունքը մարդու իրավունքների նկատմամբ: Քանի որ հարցվողները հնարավորություն ունեն նշել բոլոր այն պնդումները, որոնք ճիշտ էին համարում, ստացվել է հետաքրքիր պատկեր. հարցվողները միաժամանակ իրար հակասող դատողություններ են ընտրել՝ մի կողմից մարդու իրավունքների ուսումնասիրությունը կարևորող, մյուս կողմից՝ դրա անիմաստությունը փաստող: Այսպես, ամենամեծաքանակ խումբը, որ համաձայնել է «*հնարավոր չէ կառուցել հարուստ հասարակություն, եթե այդ երկրում ոտնահարվում են*

մարդու իրավունքները» (կազմում է 63.4 տոկոս՝ 313 աշակերտ) դատողության հետ, միաժամանակ ընտրել է մարդու իրավունքների ուսումնասիրության անհմաստությունը փաստարկող այլ դատողություններ:

Աղյուսակ # 3.4. «Հնարավոր չէ կառուցել հարուստ հասարակություն, եթե այդ երկրում ունենալով են մարդու իրավունքները» տարբերակը ընտրածների մյուս պատասխանները (% տվյալ տարբերակը ընտրածների մեջ)

	քանակը	տոկոսը
հնարավոր չէ կառուցել հարուստ հասարակություն, եթե այդ երկրում ունենալով են մարդու իրավունքները	110	35.1
մարդկանց իրավունքները ինքնըստինքյան կհարգվեն, երբ կունենանք հարուստ հասարակություն	67	21.4
անօգուտ է ուսումնասիրել այլ երկրներում մարդու իրավունքների խախտումները, կարևորը այն է՝ ինչ կատարվում է այստեղ՝ մեր երկրում	56	17.9
մարդկանց արժանավայել կյանքի համար կարևորը ոչ թե մարդու իրավունքներն են, այլ իրական եկամուտների ստացումը	39	12.5
անհմաստ է ուսումնասիրել մարդու իրավունքները, իրական կյանքը այլ կերպ է դասավորված	26	8.3
իրավունքի ուսումնասիրությունը անօգուտ է, այդ գիտելիքները մեզ ոչ մի օգուտ չեն տա	15	4.8
Ընդամենը	313	100.0

3.2. Աշակերտների իրավական գիտելիքները և վարքագիծը տարբեր իրավիճակներում

Ինչպես ցույց տվեց վերլուծությունը աշակերտները կարևորում են իրավունքի ուսումնասիրության հենց պրակտիկ նշանակությանը, այն է, որքանով այդ գիտելիքները կոգնեն պաշտպանել սեփական իրավունքները կյանքի տարբեր իրավիճակներում: Այդ նպատակով հարցաթերթիկում ներառվել է երկու հարց, որոնք արտացոլում են իրավիճակներ, որի հետ կարող է բախվել ցանկացած օրինապահ քաղաքացի. «Որքա՞ն ժամանակ Ձեզ կարող են պահել ոստիկանությունում՝ առանց որևէ մեկին դրա մասին հայտնելու»:

Աղյուսակ # 3.5. «Որքա՞ն ժամանակ Ձեզ կարող են պահել ոստիկանությունում՝ առանց որևէ մեկին դրա մասին հայտնելու» հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
Ընդհանրապես չեն կարող	258	52.2
3 ժամ	125	25.3
1 օր	28	5.7
3 օր	20	4.0
1 ամիս	2	0.4
Այլ	4	0.8
Դժվարանում են պատասխանել	56	11.3
Ընդամենը	494	100.0

Հարկ է նշել, որ այս պարագայում հարցվողները համարվում են անչափահաս (մինչև 18 տարեկան) և ոստիկանությունը պարտավոր է անհապաղ հայտնել ծնողին կամ այլ օրինական ներկայացուցիչներին երեխայի գտնվելու վայրի մասին: Այս հարցին ճիշտ է պատասխանել հարցվածների միայն կեսը (52.2%):

Հաջորդ հարցը քրեադատավարական օրենսգրքից է և վերաբերում է ցուցմունք տալուն, մի իրավիճակ, որի հետ նույնպես կարող է բաղվել յուրաքանչյուրը. «Ըստ օրենքի ո՞վ կարող է պատժվել ցուցմունք տալուց հրաժարվելու համար»:

Աղյուսակ # 3.6. «Ըստ օրենքի ո՞վ կարող է պատժվել ցուցմունք տալուց հրաժարվելու համար» հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
Ոչ մեկը	163	33.0
Կասկածյալը	115	23.3
Մեղադրյալը	130	26.3
Վկան	131	26.5

Տուժածը	72	14.6
Դժվարանում եմ պատասխանել	39	7.9

Այս հարցին ճիշտ պատասխաններն են «վկան» և «տուժածը», այն վերապահումով, որ իր ամուսնու և մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից: Այս երկու ճիշտ պատասխանները միասին նշել են ընդամենը 10 աշակերտ, որը կազմում է հարցվածների մոտ 2 տոկոսը:

Բնականաբար հարց է առաջանում՝ *«Որտեղի՞ց եք Դուք հիմնականում իմանում իրավունքների և օրենքների մասին»:*

Աղյուսակ # 3.7. *«Որտեղի՞ց եք Դուք հիմնականում իմանում իրավունքների և օրենքների մասին»* հարցի պատասխանները

	քանակը	տոկոսը
Ուսուցիչներից	251	50.8
Հեռուստատեսությունից, ռադիոյից	216	43.7
Թերթերից, գրքերից	157	31.8
Ծնողներից	141	28.5
Ընկերներից	29	5.9
Դժվարանում եմ պատասխանել	14	2.8

Ինչպես երևում է ստացված տվյալներից հիմնական աղբյուրները երկուսն են: Հարցվածների կեսը նշել է, որ իրավական գիտելիքների հիմնական աղբյուրը հանդիսանում են ուսուցիչները (50.8%), որին հաջորդում է հեռուստատեսությունը (43.7%): Այսպես, կարելի է փաստել, որ այս երկու աղբյուրների գերիշխումը հեշտացնում է ուղղորդված իրավական և քաղաքացիական դաստիարակության հատցակարգի մշակումը:

Աշակերտների հոգեկերտվածքի առանձնահատկությունները, մասնավորապես հակվածությունը դրսևորելու ռիսկային վարքագիծ, ուսումնասիրելու նպատակով, հարցաթերթիկում առաջարկվել են մի քանի հարց՝ տարբեր իրավիճակների նկարագրությամբ: Հարցերից առաջինը *«Քննության ժամանակ Ձեր ընկերոջը / համադասարանցուն հարց են տվել, որը միանշանակորեն դուրս է ծրագրի շրջանակներից, և նա չի կարողանում պատասխանել, իսկ Դուք գիտեք հարցի պատասխանը: Ինչպե՞ս եք ճիշտ համարում վարվել այս իրավիճակում»:*

Սղյուսակ # 3.8. Առաջին իրավիճակին արձագանքելու տարբերակները

	քանակը	տոկոսը
Ասել քննողին, որ այդ հարցը ծրագրից դուրս է	230	46.6
Փորձել հուշել պատասխանը Ձեր համադասարանցուն	125	25.3
Փորձել հասկացնել համադասարանցուն, որ իրեն ծրագրից դուրս հարց է տրվել	88	17.8
Ոչինչ չանել, լռել	25	5.1
Դժվարանում եմ պատասխանել	26	5.3
Ընդամենը	494	100.0

Այս իրավիճակում հարցվածների գրեթե կեսը (46,6%) կորսնորեին ակտիվ և լեզալ դիմակայության վարքագիծ՝ *«ասելով քննողին, որ հարցը ծրագրից դուրս է»*, որը որոշակի ռիսկ է պարունակում սեփական անձի համար: Այսինքն, հարցվածները բաժանվում են երկու գրեթե հավասար խմբի. լեզալ և ոչ լեզալ գործողությունների կողմնակիցների:

Հաջորդ իրավիճակը ևս վերաբերում է դպրոցական առօրյային. *«Աշակերտներից մեկը ներկայացել է դասարան վառ գույնի ներկած մազերով, ինչը դասարանում մեծ աշխուժություն է առաջացրել և խանգարում է վարել դասը: Ի՞նչ եք կարծում, դասատուի ո՞ր գործողությունները ավելի ճիշտ կլինեն»:*

Սղյուսակ # 3.9. Երկրորդ իրավիճակին արձագանքելու տարբերակները

	քանակը	տոկոսը
Բարկանալ նրա վրա դասերից հետո, առանց ներկաների	185	37.4
Ծնող կանչել	87	17.6
Ուշադրություն չդարձնել	75	15.2
Դուրս հրավիրել դասարանից	66	13.4
Ոչ չար/վիրավորական կատակ անել	45	9.1
Բարկանալ նրա վրա բոլորի ներկայությամբ	31	6.3
Դժվարանում եմ պատասխանել	32	6.5

«Դուք քայլում եք փողոցով, տեսնում եք մի քանի հոգի վիճում են: Մոտենում են ոստիկանները և պատրաստվում են վիճաբանողներին տանել ոստիկանական բաժանմունք: Դուք գիտեք մեղավորին: Կփորցե՞ք արդյոք որևէ բան բացատրել ոստիկաններին, հասկանալով, որ Ձեզ էլ կարող են տանել բաժանմունք»:

Սղյուսակ # 3.10. Երրորդ իրավիճակին արձագանքելու տարբերակները

	քանակը	տոկոսը
Ոչ, ոչ մի դեպքում չեմ միջամտի	164	33.2
Կփորձեմ բացատրել ոստիկաններին իրողությունը, եթե ես մենակ չլինեմ և մյուս ականատեսները պատրաստ կլինեն հաստատել իմ խոսքերը	151	30.6
Այո, բոլոր դեպքերում կփորձեմ բացատրել նրանց իրողությունը	138	27.9
Դժվարանում եմ պատասխանել	41	8.3
<i>Ընդամենը</i>	494	100.0

Հարցվողների պատասխանները գրեթե հավասարապես են բաշխվել՝ ըստ իրավիճակին միջամտելու պատրաստակամության աստիճանի: Սակայն, ոչ մի դեպքում չմիջամտողները 5 տոկոսով ավել են քան անկախ հանգամանքներից ակտիվ և ռիսկային վարք դրսևորելու պատրաստակամություն հայտնաձևները:

Հարկ է նշել, որ անգամ ընտրելով ռիսկային և լեզալ վարք, իրական կյանքում նրանք կարող են իրենց այլ կերպ դրսևորել, սակայն իրենց պատասխանները վկայում են, որ նրանք հենց այդպիսի վարքն են համարում ճիշտ:

Եզրակացություններ

Ամփոփելով հանրակրթական դպրոցի տասներորդիների շրջանում իրավագիտակցության և իրավական դիրքորոշումների վերաբերյալ հետազոտության արդյունքները՝ ստորև ներկայացված են առավել հետաքրքրական արդյունքները:

1. Աշակերտների մեկ քարորդը համոզմամբ մարդիկ հետևում են օրենքներին պատժվելու վախից դրդված: Աաղջիկների համար առավել կարևոր է հասարակության կարծիքը, մինչդեռ տղաների համար՝ պատժվելու վտանգը:
2. Հարցվածներից միայն կեսն է պատրաստ անվերապահորեն հետևել օրենքներին, ընդ որում աղջիկները գերակշռող մաս են կազմում այս խմբում:
3. Օրենքի կարգավորիչ դերը հասարակության կյանքում ընդունում է հարցվածների միայն 40 տոկոսը, մինչդեռ ազգային և ընտանեկան ավանդույթներն առավել ազդեցիկ մեխանիզմ են դիտվում այսօրն երիտասարդների կողմից:
4. Այսպիսով, հետազոտության արդյունքների հիման վա կարելի է փաստել օրենքի՝ որպես հասարակական հարաբերությունները կարգավորող մեխանիզմի վերաբերյալ աշակերտների հակասական պատկերացումների մասին: Մի կողմից ընդունելով օրենքի կարգավորիչ գործառույթը հասարակական հարաբերություններում, մյուս կողմից՝ վերապահելով այն ազգաին և սեփական պատկերացումներով և արժեքներով:
5. Ներկայիս երիտասարդների մոտ վերարտադրվում է ավանդական խորհրդային մոտեցումն առ այն, որ անհատի գույքի կողոպուտն ավելի մեղմ հանցանք է, քան՝ պետականինը: Պետական գույքը հափշտակելու համար հարցվածները սահմանել են ազատազրկում, մինչդեռ մասնավորի գույքի կողոպուտը, ըստ հարցվածների, փոխհատուցում է պահանջում:
6. Որպես պատժատեսակ աշակերտների կողմից դեռևս ընդունելի են պատժի այնպիսի արխաիկ դրսևորումները, ինչպիսին է ֆիզիկական պատիժը՝ ծեծ, ձեռքի հատում և այլն:
7. Հակառակ տարածված մտայնության, տղաներն ավելի մեղմ են պատիժներ սահմանելիս, քան նույն տարիքի աղջիկները: Անհատի դեմ ուղղված ծանրագույն

հանցանքի համար՝ կանխամտածված սպանության, ցմահ ազատազրկում և մահապատիժ սահմանաձևերի մեջ աղջիկները 2/3 են կազմում, մինչդեռ տղաները կողմնակից են երկարաժամկետ ազատազրկմանը՝ որպես պատիժ:

8. Հետաքրքրական է այն փաստը, որ կաշառակերությունը ընկալվում է որպես բարոյական նորմերի խախտում, այլ ոչ քրեական հանցանք. Հարցվածների 13,4 տոկոսը գտնում են, որ արարքը պետք է պատժվի հրապարակային պախարակման միջոցով: Աս հանցատեսակի դեպքում աշակերտները հակված են ավելի մեղմ պատժամիջոցներ սահմանել, քան նախատեսված է ազգային օրենսդրությամբ, հաճախակի արդարացնելով կաշառք տալու հանգամանքը պարտադրվածությամբ:
9. Թեև հարցվածների մոտ 40 տոկոսը պատժիչ ինստիտուտի դերը տեսնում է օրենքի նկատմամբ հարգանք դաստիարակելու մեջ, միևնույն ժամանակ լայն տարածում ունեն հարցվածների շրջանում միջերի տարածումը՝ պատիժը որպես նախազգուշացում մյուսների համար դիտարկողները և պատժի վերադաստիարակիչ դերի նկատմամբ հավատը:
10. Չնայած այն փաստին, որ մահապատժի կիրառումը որպես ծանրագույն պատժատեսակ այլևս չի կիրառվում Հայաստանում, այնուամենայնիվ հարցված դեռահասների կեսը կողմ են արտահայտվել մահապատժի կիրառմանը որոշ ծանր հանցանքների դեպքում:
11. Հետաքրքրական պատկեր է ստացվել մեր հասարակությունում ոտնահարվող իրավունքների վերաբերյալ հարցին ստացված պատասխաններից: Ըստ հարցված տասներորդյակների Հայաստանում ոտնահարվող իրավունքների ցանկը գլխավորում է “ազատ ընտրությունների իրավունքը” (հարցվածների 2/3), որին հաջորդում է “արդարացի դատաքննության իրավունքը”(45%): Ստացված արդյունքները թույլ են տալիս փաստել տասներորդյակների մոտ մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ բավականաչափ օբյեկտիվ պատկերացումների մասին:
12. Վերլուծությունը ցույց է տալիս, որ աշակերտների իրավագիտակցության մեջ մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները երկու խմբի են բաժանվում: Խմբերից մեկը՝ ազատ ընտրությունների, արդարացի դատաքննության, խոսքի ազատության իրավունքների կարևորությունը համաչափ է դրանց ոտնահարման աստիճանին Հայաստանում, մյուս խումբը՝

ազատության և անձեռնմխելիության իրավունք, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք կարևորվում է ինքնին և դիտվում որպես բացարձակ և անքակտելի արժեք:

Այսպիսով, տասներորդիների շրջանում անցկացված հետազոտության արյունքների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ աշակերտների իրավական գիտակցությունը և պատկերացումները բնորոշվում են հակասականությամբ: Մի կողմից առկա են խորհրդային տոտալիտար գաղափարախոսության որոշ տարրեր, որոնք դեռևս արմատացած են հասարակության մեջ և վերարտադրվելու ներուժ ունեն: Մյուս կողմից, պետք է փաստել երիտասարդների մոտ իրավիճակի անկողմնակալ գնահատում և ազատական գաղափարախոսության որոշ տարրերի առկայությունը: Պետք է նշել, որ թեև այս սերունդը իր սոցիալականացման գործընթացը սկիզբ է առել արդեն նոր հասարակարգի ձևավորման փուլում, սակայն այն ընթացել է արժեքային և գաղափարական երկփեղկվածության պայմաններում:

Հարցաթերթիկի կառուցվածքը

Իրավագիտակցություն		Հոգեբանական առանձնահատկություններ (նախապատվություններ)
Դիրքորոշումներ (պատկերացումներ)	Տեղեկացվածության	
	Իրավունքների իմացությունը	Իրականության իմացություն
<p>Իրավունքի գոյության կարևորության մասին 15, 32, 33</p> <p>Իրավունքը հարգելու անհրաժեշտության և պատժամիջոցների մասին 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11</p> <p>Իրավունքը դասավանդելու անհրաժեշտության մասին 30, 31, 32, 33</p> <p>Մարդու իրավունքները հարգելու անհրաժեշտության մասին 13, 19, 20, 21, 27, 28</p> <p>Հասարակության և պետության կառուցվածքի մասին 17, 20, 22</p>	<p>34, 35</p>	<p>Այլ մարդկանց հոգեբանությունը 1, 8, 10</p> <p>Սեփական հասարակություն (դպրոց, ընտանիք) 12, 23, 24, 25, 26</p>
Անձնական տվյալներ		
<p>Դեմոգրաֆիական տվյալներ 40, 41</p>		